

**Համաձայնեցված է**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

\_\_\_\_\_ **Տ. Դավթյան**

\_\_\_\_\_ **Գ. Խաչատրյան**

20 հոկտեմբերի 2010 թ.

N 697-Ն

28 հոկտեմբերի 2010 թ.

N 15

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ԿՍԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում ռեզիդենտը ամսական կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն՝ շահութահարկի հաշվարկների ներկայացման ժամկետից ոչ ուշ՝ այդ մասին գրավոր հայտնելով հարկային տեսչության մարմիններին: Կանխավճարի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի շահութահարկի 75%-ից պակաս լինելու դեպքում ռեզիդենտը վճարում է տույժ՝ փաստացի ստացված շահութահարկի 1/16-ի և տվյալ ամսվա փաստացի կատարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված օրվանից մինչև հարկային տեսչության մարմին փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալու (շահութահարկի հաշվարկը ներկայացնելու) օրը:

«Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 9.7 կետի «ե» ենթակետի համաձայն շահութահարկի կանխավճարներ չի կատարում այն ռեզիդենտը, որը ընթացիկ տարում եկամուտներ չի նախատեսում (գործունեություն չի իրականացնելու)՝ այդ մասին նախօրոք (նախորդ տարվա շահութահարկի հաշվարկների օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ) հարկային մարմին գրավոր հայտնելուց հետո:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Եթե ռեզիդենտը, շահութահարկի հաշվարկների՝ Օրենքով սահմանված ներկայացման ժամկետից ոչ ուշ, գրավոր հայտարարություն է ներկայացնում իր հաշվառման վայրի հարկային տեսչություն՝ անորոշ ժամկետով գործունեություն չիրականացնելու մասին, ապա գործունեություն չիրականացնելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացնելուց հետո կանխավճարների համար Օրենքով սահմանված առաջիկա վճարման ժամկետից սկսած ռեզիդենտը շահութահարկի կանխավճարների ամսական վճարումներ չի կատարում՝ անգամ եթե հարկային տեսչության մարմին ներկայացրած գրավոր հայտարարության մեջ չի նշել շահութահարկի կանխավճարներ չկատարելու մասին:

Հարկային տեսչություն ներկայացրած գրավոր հայտարարություն ներկայացնելուց հետո

գործունեություն իրականացնելու դեպքում տույժերը հաշվարկվում են Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ ընթացիկ տարում եկամուտներ չնախատեսելու (գործունեություն չիրականացնելու) մասին գրավոր հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող առաջիկա կանխավճարային մուծման վճարման ժամկետից սկսած: